

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ  
2018**

**«Գյումրիի և Տաշիրի տարեցների ցերեկային խնամքի կենտրոնների վերանորոգման  
աշխատանքներ» ծրագրի ավարտի արարողություն**

2021թ. փետրվարի 26-ին, Շիրակի մարզի, Գյումրիի Հայկական Կարիտասի տարեցների ցերեկային խնամքի կենտրոնում տեղի ունեցավ «Գյումրիի և Տաշիրի տարեցների ցերեկային խնամքի կենտրոնների վերանորոգման աշխատանքներ ծրագրի» մինչև 21,634 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, Գյումրի քաղաքի փոխքաղաքապետ պարոն Հայկ Սուլթանյանը, Շիրակի մարզպետի խորհրդական պարոն Լևոն Անանյանը, Հայկական Կարիտասի գործադիր տնօրեն պարոն Գագիկ Տարասյանը, ինչպես նաև կենտրոնի անձնակազմը և տարեց բնակիչները:

Ծրագրի նպատակն է բարելավել Գյումրիի և Տաշիրի տարեցների ցերեկային խնամքի կենտրոնների շենքային պայմանները, ինչպես նաև բարձրացնել Կենտրոններում մատուցվող առողջապահական ծառայությունների որակը: Սույն ծրագրի շրջանակներում վերը նշյալ կենտրոններում ձեռնարկված և առողջապահական գույքի և աքսեսուարների ձեռք բերումն է՝ շահառուներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակը բարելավելու նպատակով:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ պարոն Գագիկի Տարասյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը իրենց ներդրման և վստահության համար, որի շնորհիվ «Հայկական Կարիտաս» բարեսիրական կազմակերպությունը հաջողությամբ ավարտել է Գյումրիի և Տաշիրի տարեցների ցերեկային խնամքի կենտրոնների շենքային պայմանների բարելավումը՝ Ճապոնիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Իր հերթին դեսպան Յամադան շեշտեց, որ հատկապես ուրախ է իմանալ, որ այս ծրագրի միջոցով բարելավել են երկու կենտրոնների սանիտարական անվտանգության ապահովման պայմանները: Արտացոլելով Ճապոնիայի կառավարության «Մարդկային անվտանգություն» հայեցակարգն իրականացնելու վճռական հանձնառությունը, այս ծրագիրը մարդկանց բարեկեցության և անվտանգության բարձրացման հստակ դրսևորում է:

Գյումրիի փոխքաղաքապետ պարոն Հայկ Սուլթանյանը նույնպես շնորհակալություն հայտնեց այս ծրագրում ներգրավված բոլոր կողմերին և արտահայտեց իր պատրաստակամությունը՝ շարունակելու նման ծրագրերի իրականացումը Գյումրիում:

Արարողության վերջում Հայկական Կարիտասի՝ Գյումրիի ցերեկային խնամքի կենտրոնի տարեցները իրենց շնորհակալությունը հայտնեցին դեսպան Զուն Յամադային և Ճապոնիայի կառավարությանը նման բացառիկ հնարավորության համար:



Դեսպան Յամադայի և «Հայկական Կարիտաս» ՀԿ-ի գործադիր տնօրեն պարոն Տարապյանի ձեռքսեղմումը դրամաշնորհային աջակցության վահանակի բացման ժամանակ



Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը



Շիրակի մարզպետի խորհրդական պարոն Լևոն Անանյան շնորհավորական ուղերձը



«Հայկական Կարիտաս» ՀԿ-ի ծրագրերի ղեկավար Արմեն Մարտիրոսյանի ողջունի խոսքը



Գյումրիի ցերեկային խնամքի կենտրոնի տարեցների պատրաստած ձեռագործ նվերը դեսպան Ցամադային



Գյումրիի վերանորոգված ցերեկային խնամքի կենտրոնը



Գյումրիի ցերեկային խնամքի կենտրոնի վերանորոգման աշխատանքների ժամանակագրական տախտակ



Դրամաշնորհային աջակցության շնորհիվ ցերեկային խնամքի կենտրոնի կողմից ձեռք բերված նոր սարքավորումները